



**Ձեր Anthem Blue Cross Medi-Cal-ի ապահովագրված նպաստների և ծառայությունների փոփոխությունների և թարմացումների ամփոփում**

**Փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ հունվարի 1, 2019**

Anthem-ի հարգելի անդամ,

Այս նամակի նպատակն է տեղեկացնել Ձեզ Anthem-ի միջոցով ստացվող Medi-Cal ապահովագրված ծառայություններում կատարված փոփոխությունների մասին: Ստորև ներկայացվող թարմացումները նկարագրում են Anthem-ի կողմից վերջերս կատարված փոփոխությունները, որոնք կարող են փոխել այն, թե ինչպես եք ստանում Ձեր խնամքը և ուր կարող եք զանգահարել օգնության համար: Այս փոփոխությունները հետևյալի արդյունք են՝

- Թարմացումներ Ձեր 2018 Anthem Medi-Cal Member Handbook/Evidence of Coverage-ում:
- Նոր նպաստներ և ծառայություններ, որոնք հասանելի են Ձեզ՝ որպես Anthem-ի Medi-Cal-ի անդամի:

Ձեր 2018 Anthem Medi-Cal Member Handbook/Evidence of Coverage-ի փոփոխությունները նշված են հետևյալ ձևով՝

- ~~ջերմաստիճան~~ **ջերմաստիճան**՝ ցույց տալու համար, որ տեքստն է հեռացվել ԿԱՄ
- **թավ և շեղ տեքստ**՝ ցույց տալու համար, որ տեքստն ավելացվել:

Խնդրում ենք ընթերցել այս փոփոխությունները և այս նամակը պահել Ձեր 2018 Anthem Medi-Cal Member Handbook/Evidence of Coverage-ի հետ: Եթե որևէ հարցեր ունեք ապահովագրված ծառայությունների և նպաստների վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-888-285-7801 հեռախոսահամարով, (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 7 a.m.-ից 7 p.m.-ը, խաղաղօվկիանոսյան ժամանակով: Այս զանգն անվճար է:

Բաժին. Նպաստներ և ծառայություններ

***Care Management ծրագիր***

***Anthem-ն ունի Care Management-ի թիմ, որն օգնում է պատասխանել Ձեր ունեցած որևէ հարցերին հետևյալի մասին՝***

- *Ձեր առողջական խնամքը:*
- *Վարքագծային առողջության ծառայություններ ստանալը (հոգեկան առողջություն և թմրամիջոցների օգտագործման խանգարում):*
- *Այլ ծառայություններ, որոնք կարող են օգնել բարելավել Ձեր առողջությունը:*

*Եթե հարցեր ունեք Care Management-ի ծրագրի մասին, խնդրում ենք զանգահարել խնամքի մենեջերին՝ 1-844-200-0104 անվճար հեռախոսահամարով (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 8 a.m.-ից 5 p.m.-ը, բացի որոշ տոն օրերից:*

Բաժին. Նպաստներ և ծառայություններ

*Diabetes Prevention Program (նոր սպասու)*

*Anthem-ն առաջարկում է Diabetes Prevention Program (DPP): Սա փաստերի վրա հիմնված, ապրելակերպի փոփոխության ծրագիր է, որն ուղղված է կանխելու կամ հետաձգելու 2-րդ տիպի շաքարախտն այն մարդկանց մոտ, որոնք արդեն ախտորոշվել են նախաշաքարախտով: Ծրագիրը տևում է մեկ տարի և կարող է շարունակվել ևս մեկ տարվա ընթացքում որակավորվող անդամների համար: Այս ծրագիրն օգտագործում է ապրելակերպի հաստատված փոփոխություններ, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով.*

- *Տրամադրում է հավասարակից մարզիչ:*
- *Սովորեցնում է ինքնահետևում և խնդիրների լուծում:*
- *Տրամադրում է աջակցություն և հետադարձ կապ:*
- *Տրամադրում է խորհուրդներ՝ նպատակները սատարելու համար:*
- *Հետևում է քաշի կանոնավոր չափումներին՝ նպատակներին հասնելու օգնության համար:*

*DPP-ն առաջարկվում է վիրտուալ կամ անձամբ տարբերակով՝ կախված Ձեր գտնվելու վայրից կամ Ձեր կարիքներից: DPP-ով հետաքրքրված անդամները պետք է համապատասխանեն ծրագրի իրավասության կանոններին, ինչպես օրինակ՝ պաս պահելու որոշակի մակարդակներ, արյան զուկոզայի մակարդակների և մարմնի զանգվածի ինդեքսի չափումներ: Մանրամասների, ինչպես նաև DPP իրավասության հարցերի համար, անդամները կարող են այցելել [www.solera4me.com/AnthemBC\\_MediCal](http://www.solera4me.com/AnthemBC_MediCal) կայքը:*

Մանրամասների համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-888-285-7801 հեռախոսահամարով (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 7 a.m.-ից 7 p.m.-ը, խաղաղօվկիանոսյան ժամանակով:

Բաժին. Նպաստներ և ծառայություններ

*Health Homes Program (նոր սպաստ)*

*Նկարագրություն.*

*Anthem-ն սպաստվագրում է Health Homes Program-ի (HHP) ծառայությունները որոշակի քրոնիկական առողջական վիճակներ ունեցող անդամների համար: Այս ծառայություններն օգնում են համակարգել ֆիզիկական, վարքագծային առողջության ծառայությունները և համայնքային հիմունքով երկարաժամկետ ծառայությունները և աջակցությունները (long term services and supports, LTSS) քրոնիկական վիճակներ ունեցող անդամների համար:*

*Ձեզ հետ կարող են կապվել, եթե որակավորվում եք ծրագրի համար: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք Anthem կամ գրուցեք Ձեր բժշկի կամ կլինիկայի անձնակազմի հետ՝ պարզելու համար, եթե կարող եք HHP ծառայություններ ստանալ:*

*Կարող եք որակավորվել HHP-ի համար, եթե.*

*Ունեք որոշակի քրոնիկական առողջական վիճակներ: Կարող եք զանգահարել Anthem՝ պարզելու համար, թե որ վիճակներն են որակավորվում: Դուք պետք է նաև համապատասխանեք հետևյալից մեկին՝*

- Դուք ունեք երեք կամ ավել HHP իրավասու քրոնիկական վիճակ:*
- Դուք հիվանդանոց եք պառկել անցած տարի:*
- Դուք այցելել եք շտապ օգնության սենյակ երեք անգամ կամ ավել անցած տարի կամ*
- Դուք բնակվելու տեղ չունեք:*

*Դուք չեք որակավորվում HHP ծառայությունների համար, եթե.*

*Դուք ստանում եք հոսպիսի ծառայություններ: Կամ դուք երկու ամսից ավել բնակվում եք հմուտ բուժքույրական հաստատությունում:*

*Սպաստվագրված HHP ծառայություններ.*

*HHP-ը Ձեզ տրամադրում է խնամքի համակարգող և խնամքի թիմ, որոնք կաշխատեն Ձեզ և Ձեր առողջական խնամքի մատակարարների հետ, ինչպիսիք են՝ Ձեր բժիշկները, մասնագետները, դեղագործները, գործի մենեջերները և այլոք,*

*Ձեր խնամքը համակարգելու նպատակով: Anthem-ը տրամադրում է HHP ծառայություններ, որոնք ներառում են՝*

- Համապարփակ խնամքի կառավարում*
- Խնամքի համակարգում*

- Առողջության առաջարժույթ
- Համապարփակ անցումային խնամք
- Անհատական և ընտանեկան աջակցության ծառայություններ
- Համայնքային և հասարակական աջակցությունների ուղեգրեր

Արժեքը մասնակցի համար`

*HHP ծառայություններն անվճար են անդամի համար*

*Anthem-ը և իր գործընկերները կարող են զանգահարել Ձեզ, եթե համապատասխանում եք կանոններին:* Մանրամասների համար զանգահարեք Հաճախորդների խնամքի կենտրոն` 1-888-285-7801 հեռախոսահամարով (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 7 a.m.-ից 7 p.m.-ը, խաղաղօվկիանոսյան ժամանակով:

---

Բաժին. Նպաստներ և ծառայություններ

*Pediatric Palliative Care (նոր նպաստ)*

*Սկսած 2019թ. հունվարի 1-ից` Pediatric Palliative Care (PPC) ծառայությունները տրամադրվելու են Contracted Pediatric Palliative Care Providers-ի կողմից:*

*PPC-ն կարող է օգնել լուրջ հիվանդություններ ունեցող իրավասու երեխաներին և իրենց ընտանիքներին գտնել ամոքիչ խնամքի ծառայություններ, ներառյալ` խնամքի համակարգում, ցավի և ախտանիշների տնօրինում, էքսպրեսիվ թերապիաներ, հիմնական խնամակալի հանգստի համար նախատեսված տնային խնամք և այլ աջակից ծառայություններ: PPC-ն ընտանիքներին լրացուցիչ օգնություն է տրամադրում, քանի նրանք շարունակում են բուժում ստանալ: Մանրամասների համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման կենտրոն` 1-888-285-7801 հեռախոսահամարով (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 7 a.m.-ից 7 p.m.-ը, խաղաղօվկիանոսյան ժամանակով:*

---

Բաժին. Նպաստներ և ծառայություններ

*Մանկարուժական ծառայություններ*

*Anthem-ն առաջարկում է early and periodic screening, diagnostic and treatment (EPSDT) ծառայություններ:*

- Եթե Ղուք կամ Ձեր երեխան 21 տարեկանից ցածր էք, Anthem-ն ապահովագրում է երեխայի բարեկեցության այցելությունները: Երեխայի բարեկեցության այցելությունները կանխարգելման, զննման, ախտորոշման և բուժման համապարփակ ծառայություններ են:
- Anthem-ը ժամադրություններ կնշանակի և փոխադրում կտրամադրի՝ երեխաներին անհրաժեշտ խնամք ստանալու հարցում օգնելու համար:
- Կանխարգելիչ խնամք կարող են լինել առողջության կանոնավոր ստուգումները և զննումները՝ Ձեր բժշկին օգնելու համար շուտ գտնել խնդիրները: Կանոնավոր ստուգումներն օգնում են Ձեր բժշկին փնտրել Ձեր բժշկական, ատամնաբուժական, տեսողության, լսողության, հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման ցանկացած խանգարումների հետ կապված խնդիրները: Anthem-ն ապահովագրում է զննման ծառայություններ ցանկացած պահի, երբ դրանց կարիքն ունեք, անգամ եթե դրանք Ձեր կանոնավոր ստուգումների ժամանակ չեն: Բացի դրանից, կանխարգելիչ խնամք կարող են լինել Ձեզ կամ Ձեր երեխային հարկավոր սրսկումները: Anthem-ը պետք է երաշխավորի, որ բոլոր անդամագրված երեխաները ստանան անհրաժեշտ սրսկումներն առողջական խնամքի այցելությունների ընթացքում:
- Երբ ստուգման կամ զննման ընթացքում հայտնաբերվում է ֆիզիկական կամ հոգեկան առողջության խնդիր, կարող է տրամադրվել խնամք, որը կշտկի խնդիրը կամ կօգնի դրա լուծմանը: Եթե խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, և Anthem-ը պատասխանատու է խնամքի վճարման համար, ապա Anthem-ն ապահովագրում է խնամքը Ձեզ համար անվճար: Այս ծառայությունները ներառում են.
  - Բժշկի, բժշկական պրակտիկայով զբաղվող բուժքրոջ և հիվանդանոցային խնամք:
  - Սրսկումներ Ձեզ առողջ պահելու համար:
  - Ֆիզիկական, խոսքի/լեզվի և աշխատանքային թերապիաներ:
  - Տնային առողջության ծառայություններ, որոնք կարող են լինել բժշկական սարքավորումներ, պարագաներ և սարքեր:
  - Տեսողության և լսողության բուժում, որը կարող է լինել ակնոցներ և լսողական սարքեր:
  - Behavioral Health Treatment աուտիզմի բազմաշերտ խանգարումների և զարգացման այլ արատների համար:
  - Գործի կառավարում, գործի թիրախային կառավարում և առողջական կրթություն:
  - Վերականգնողական վիրահատություն, որը վիրահատություն է՝ ուղղելու կամ վերականգնելու համար մարմնի ոչ նորմալ կառուցվածքը, որն արդյունք է բնածին արատների, զարգացման անոմալիաների, վնասվածքի, վարակի, ուռուցքների կամ հիվանդության՝ ֆունկցիան բարելավելու կամ նորմալ տեսք ստեղծելու նպատակով:
- Եթե խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է, և Anthem-ը պատասխանատու չէ խնամքի վճարման համար, ապա Anthem-ը կօգնի Ձեզ ստանալ անհրաժեշտ խնամքը: Այս ծառայությունները ներառում են.

- Բուժում և վերականգնողական ծառայություններ հոգեկան առողջության և թմրամիջոցների օգտագործման խանգարումների համար:
- Բուժում ստամոսաբուժական խնդիրների համար, որը կարող է լինել օրթոդոնտիկա:
- Անձնական խնամքի բուժքույրական ծառայություններ:

---

Բաժին. Նպաստներ և ծառայություններ

*Pharmacy at Home* ծրագիր

*Los Angeles-ում գտնվող որակավորվող անդամների համար Anthem-ն առաջարկում է Safe Choice ծրագիրը: Pharmacy at Home կամ Safe Choice ծրագրերի մասին մանրամասների համար զանգահարեք Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-888-285-7801 հեռախոսահամարով (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 7 a.m.-ից 7 p.m.-ը, խաղաղօվկիանոսյան ժամանակով:*

*Pharmacy Member Services*

*Այն անդամները, որոնց օգնություն է հարկավոր իրենց մանրածախ դեղատոմսերի հարցում, կարող են զանգահարել Medi-Cal Pharmacy Member Services՝ 1-833-205-6004 հեռախոսահամարով (TTY 711):*

---

Բաժին. Նպաստներ և ծառայություններ

*Փոխադրում (ավելացված նպաստներ)*

*Anthem-ը շարունակում է բարելավել խնամքի մատչելիությունը մեր անդամների համար և կանոնավոր կերպով բարձրացնում է մեր փոխադրումների սպասարկման որակը՝ բժշկական և ոչ-բժշկական փոխադրման կարիքների համար: Մանրամասների համար այցելեք մեր կայքը՝ [www.anthem.com/ca/medi-cal](http://www.anthem.com/ca/medi-cal) և/կամ զանգահարեք Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ 1-888-285-7801 հեռախոսահամարով (TTY 711), երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 7 a.m.-ից 7 p.m.-ը, խաղաղօվկիանոսյան ժամանակով:*

*Եթե բժշկական արտակարգ վիճակ ունեք, խնդրում ենք զանգահարել 911:*

*Փոխադրում պատվիրելու համար զանգահարեք Reservation գծով՝ 1-877-931-4755 հեռախոսահամարով: Ամրագրումները պետք է կատարվեն երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 7 a.m.-ից 7 p.m.-ը, տեղական ժամանակով: Փոխադրման հայտերը պետք է արվեն Ձեր ժամադրությունից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:*

*Ամրագրում կատարելիս խնդրում ենք ունենալ հետևյալ տվյալները՝*

- Ձեր Anthem Medi-Cal անդամի ID համարը
- Այնհաստատության անվանումը, հասցեն և հեռախոսահամարը, ուր պատրաստվում էք գնալ
- Ժամադրության ամսաթիվը և ժամը

Արդեն նշանակված ամրագրման հարցում օգնության համար զանգահարեք Ride Assist գծով՝ 1-877-931-4756 հեռախոսահամարով (TTY 1-866-288-3133): Օգտվեք այս համարից «Will Call» ծառայությունն ակտիվացնելու համար, կամ եթե Ձեր փոխադրումն ուշանում է նշանակված ժամադրությունից: Խնդրում ենք օգտվել այս համարից նաև այն դեպքերում, եթե ցանկանում եք փոխել կամ չեղարկել արդեն նշանակված ամրագրումը:

Բաժին. Կարևոր հեռախոսահամարներ և բառեր

*Early and periodic screening, diagnosis and treatment (EPSDT). EPSDT ծառայությունները նպաստ են համարվում 21 տարեկանից ցածր տարիքի Medi-Cal անդամների համար՝ իրենց առողջ պահելու նպատակով: Անդամները պետք է իրենց տարիքին հարմար ստուգումներ և համապատասխան զննումներ անցնեն՝ առողջական խնդիրներ հայտնաբերելու և հիվանդությունները շուտ բուժելու համար:*

*Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ (կամ բժշկական անհրաժեշտություն). Բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամքը կարևոր ծառայություններ են, որոնք ողջամիտ են և պաշտպանում են կյանքը: Այս խնամքն անհրաժեշտ է հիվանդներին լուրջ հիվանդությունից կամ հաշմանդամությունից պաշտպանելու համար: Այս խնամքը նվազեցնում է սաստիկ ցավը՝ բուժելով հիվանդությունը կամ վնասվածքը: 21-ից ցածր տարիքի անդամների համար Medi-Cal ծառայությունները ներառում են խնամք, որը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ վիճակը շտկելու կամ դրան օգնելու համար, ներառյալ թմրամիջոցներ օգտագործման խանգարումները, ինչպես նշված է Section 1396d(r) of Title 42 of the United States Code-ում:*

[www.anthem.com/ca/medi-cal](http://www.anthem.com/ca/medi-cal)

Ձեզ օգնություն է հարկավոր Ձեր առողջապահական խնամքի, մեզ հետ զրուցելու կամ մեր ուղարկած նյութերը կարդալու հետ կապված: Մենք անվճար

տրամադրում ենք մեր նյութերն այլ լեզուներով և  
ձևաչափերով, ներառյալ՝ Braille, խոշոր տառատեսակ  
կամ ձայնագրություն: Չանգահարեք մեզ  
1-888-285-7801 անվճար հեռախոսահամարով (TTY 711)  
(L.A. Care), 1-800-407-4627 անվճար հեռախոսահամարով  
(TTY 1-888-757-6034) (Medi-Cal):

Anthem Blue Cross-ը Blue Cross of California-ի առևտրային անվանումն է: Anthem Blue  
Cross-ը և Blue Cross of California Partnership Plan, Inc.-ը Blue Cross Association-ի  
անկախ արտոնագրյալներ են: Anthem-ը Anthem Insurance Companies, Inc.-ի  
գրանցված ապրանքանիշն է:  
Blue Cross of California-ն պայմանագիր է կնքել L.A. Care Health Plan-ի հետ՝ Medi-Cal  
Managed Care-ի ծառայություններ մատուցելու համար Los Angeles County-ում: